ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՊՀ

# ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

ՎԶՄԲ ՎԱՐԿ No. 7963-AM

# ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՎ

# ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա վերաբերյալ

ԵՐԵՎԱՆ
Հունիս 2014

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ


ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ .......... 3

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ .......... 5

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄՏԱՑՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ .......... 6

ԸՍՏ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՖՈՆԴԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ .......... 8

ՎԱՐԿԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՌՀԱՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ .......... 9

ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ .......... 10

ԾՐԱԳՐԻ ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ .......... 11

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԾՐԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒՄ .......... 16

## ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 56

«Էլեկտրոնային Հասարակության և Մրցունակության Համար Նորարարության» ծրագրի 2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

Ներկայացվում է Արտասահմանյան Ֆինանսական Ծրագրերի Կառավարման Կենտրոնի (ԱՖԾԿԿ) ղեկավարությանը

Մեր կողմից իրականացվել է ՎԶՄԲ 7963-AM վարկի միջոցով ֆինանսավորվող «Էլեկտրոնային Հասարակության և Մրցունակության Համար Նորարարության» ծրագրի հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, որոնք ներառում են 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, տվյալ ամսաթվին ավարտվող տարվա դրամական միջոցների ստացումների և ծախսումների մասին, ըստ ծրագրի բաղադրիչների ֆոնդերի օգտագործման մասին, վարկային միջոցների առհանումների, նպատակային հաշվի հաշվետվությունները, ինչպես նաև հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփը և այլ ծանոթագրություններ:

*Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար*

Ծրագրի ղեկավարությունը պատասխանատու է հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար՝ համաձայն «Ֆինանսական հաշվետվություններ հաշվապահական հաշվառման դրամարկղային սկզբունքով» Հանրային Ոլորտի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտի, որը հրապարակվել է Հաշվապահների Միջազգային Դաշնության (ՀՄԴ) Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՀՀՄՍԽ) կողմից: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններ, որոնք զերծ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

*Աուդիտորի պատասխանատվությունը*

Մենք պատասխանատու ենք ՀՄԴ-ի Աուդիտի և Երաշխավորման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ԱԵՄՍԽ) կողմից հրապարակված Աուդիտի Միջազգային Ստանդարտներին համապատասխան մեր կողմից իրականացված աուդիտի հիման վրա նշված հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր արտահայտած կարծիքի համար: Այդ ստանդարտներով պահանջվում է պահպանել վարվեցողության կանոնները և աուդիտը պլանավորել ու անցկացնել՝ հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ ողջամիտ երաշխիքներ ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններում ու համապատասխան ծանոթագրություններում արտացոլված տվյալները հիմնավորող փաստերի ձեռքբերման նպատակով մշակված ընթացակարգեր, որոնց ընտրությունը կախված է խարդախությունների և սխալների հետևանքով հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններում էական խեղաթյուրումների ռիսկերի առկայության վերաբերյալ աուդիտորական գնահատումներից: Ռիսկերի գնահատումները կատարելիս՝ աուդիտորը մշակում է համապատասխան ընթացակարգեր հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության գնահատման և ոչ՝ ընկերության ողջ ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք կազմելու համար: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների և ղեկավարության կողմից կատարված գնահատումների, ինչպես նաև հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ համապատասխան աուդիտորական ապացույցներ մեր կարծիքն արտահայտելու համար:

*Կարծիք*

Մեր կարծիքով՝

1. Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ծրագրի ֆինանսական վիճակը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա դրամական միջոցների ստացումները և վճարումները, նպատակային հաշվի շարժը և մնացորդը՝ համաձայն «Ֆինանսական հաշվետվություններ հաշվապահական հաշվառման դրամարկղային սկզբունքով» Հանրային Ոլորտի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտի:
2. Ֆոնդերը օգտագործվել են համաձայն Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի միջև կնքված 7963-AM Վարկային համաձայնագրում նշված պայմաններին և Համաշխարհային Բանկի համապատասխան ուղեցույցներին համաձայն՝ պատշաճ ուշադրություն դարձնելով տնտեսմանը և արդյունավետությանը, և միայն այն նպատակներով, որոնց համար հատկացվել են:
3. Փոխհատուցման դիմումներում ներկայացված ծախսերը ապահովված են համապատասխան հիմնավորող փաստաթղթերով, գրանցումներով և հաշիվներով: Փոխհատուցման դիմումներում ներառված և փոխհատուցված ծախսերը ընդունելի են ֆինանսավորման համար՝ համաձայն 7963-AM Վարկային համաձայնագրի:

«ՍՕՍ-Աուդիտ» ՍՊԸ
23 հունիսի, 2014թ.

Մանվել Ղազարյան
Տնօրեն

Նազիկ Չիքչյան
Աուդիտոր


Քրոու Հորվաթ Բիզնես Ալյանսի Ասոցիացված Անդամ

ՀՀ, ք. Երևան 0037, Ա.Տիգրանյան 38/55; Հեռ.՝ (+37410) 20 11 51; Ֆաքս՝ (+37410) 20 11 50; www.sosaudit.am; էլ-փոստ՝ info@sosaudit.am

An Associate of the Crowe Horwath Business Alliance

38/55 A.Tigranyan, 0037 Yerevan, RA; Tel.: (+37410) 20 11 51; Fax: (+37410) 20 11 50; www.sosaudit.am; E-mail: info@sosaudit.am

# ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

*Էլեկտրոնային հասարակության և մրցունակության համար նորարարության ծրագիր*
*ՎԶՄԲ վարկ No. 7963-AM*
*2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ*
*ԱՄՆ դոլար*

| | 31.12.2013 | 31.12.2012 |
|---|---|---|
| ԱԿՏԻՎՆԵՐ | | |
| **Դրամական միջոցներ** | | |
| Նպատակային հաշիվ (ՎԶՄԲ վարկ No. 7963-AM) | 389,539.61 | 239,311.62 |
| Ընթացիկ հաշիվ (ՀՀ Կառավարության համաֆինանսավորում) | 171,967.42 | 151,192.07 |
| | 561,507.03 | 390,503.69 |
| **Անողական ծախսումներ** | | |
| Անողական ծախսեր (ՎԶՄԲ վարկ No. 7963-AM) | 7,737,157.21 | 2,258,870.76 |
| Անողական ծախսեր (ՀՀ Կառավարություն) | 1,082,786.73 | 572,482.64 |
| | 8,819,943.94 | 2,831,353.40 |
| ԸՆԴԱՄԵՆԸ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ԾԱԽՍՈՒՄՆԵՐ | 9,381,450.97 | 3,221,857.09 |
| ՖՈՆԴԵՐ | | |
| **Ծրագրի ֆինանսավորում** | | |
| ՎԶՄԲ վարկ No. 7963-AM | 8,126,696.82 | 2,498,182.38 |
| ՀՀ Կառավարության համաֆինանսավորում | 1,266,189.32 | 732,416.15 |
| | 9,392,886.14 | 3,230,598.53 |
| Արտարժութային օգուտ/(վնաս) | (11,435.17) | (8,741.44) |
| ԸՆԴԱՄԵՆԸ ՖՈՆԴԵՐ | 9,381,450.97 | 3,221,857.09 |

*Ծրագրի հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են «Արտասահմանյան Ֆինանսական Ծրագրերի Կառավարման Կենտրոն» պետական հիմնարկի ղեկավարության կողմից 2014թ. հունիսի 23-ին: Կից ծանոթագրությունները ծրագրի հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասն են:*

Էդգար Ավետյան
Գործադիր տնօրեն

Արմեն Շահնազարյան
Ֆինանսական ղեկավար

## ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՍՏԱՑՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

*Էլեկտրոնային հասարակության և մրցունակության համար նորարարության ծրագիր*
*ՎԶՄԲ վարկ No. 7963-AM*
*2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա վերաբերյալ*
*ԱՄՆ դոլար*

| Հոդվածներ | Փաստացի | | Նախատեսված | | Շեղում | | ԾԳՓ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Հաշվետու տարի | Անողական | Հաշվետու տարի | Անողական | Հաշվետու տարի | Անողական | |
| **Դրամական միջոցների սկզբնական մնացորդ** | | | | | | | |
| Նպատակային հաշիվ - ՎԶՄԲ վարկ No. 7963-AM | 239,311.62 | | | | | | |
| Ընթացիկ հաշիվ -ՀՀ Կառավարության համաֆինանսավորում | 151,192.07 | | | | | | |
| **Ընդամենը** | **390,503.69** | | | | | | |
| **Ֆոնդերի աղբյուրները** | | | | | | | |
| ՎԶՄԲ վարկ No. 7963-AM | 5,628,514.44 | 8,071,644.65 | | | | | |
| ՎԶՄԲ -ԾՆԿ No. P457-AM | - | 55,052.17 | | | | | |
| ՀՀ Կառավարության համաֆինանսավորում | 533,773.17 | 1,250,681.57 | | | | | |
| ՀՀ Կառավարություն - ԾՆԿ | - | 15,507.75 | | | | | |
| **Ընդամենը** | **6,162,287.61** | **9,392,886.14** | | | | | |
| **Արտարժութային օգուտ/(վնաս)** | (2,693.73) | (11,435.17) | | | | | |
| **Ֆոնդերի օգտագործում** | | | | | | | |
| 1. Ապրանքներ, աշխատանքներ, խորհրդատվություն, վերապատրաստում և գործառնական ծախսեր | 2,943,569.52 | 5,644,363.00 | 4,701,680.00 | 7,402,473.48 | (1,758,110.48) | (1,758,110.48) | 7,195,400.00 |
| 2. Ենթաֆինանսավորում | 2,979,260.96 | 2,979,260.96 | 3,000,000.00 | 3,000,000.00 | (20,739.04) | (20,739.04) | 16,900,000.00 |
| *ա) Ծրագրի Ա.1(բ) շրջանակներում (Համազգային լայնաշերտ մագիստրալային մալուխ և կառավարության ցանց)* | - | - | - | - | - | - | *10,000,000.00* |
| *(բ) Ծրագրի Ա.3 մասի շրջանակներում («Համակարգիչ բոլորի համար» ծրագիր)* | *2,979,260.96* | *2,979,260.96* | *3,000,000.00* | *3,000,000.00* | *(20,739.04)* | *(20,739.04)* | *3,000,000.00* |
| *(գ) Ծրագրի Բ.1(ա) մասի շրջանակներում (Գաղափարների ձևավորման դրամաշնորհներ և Ներդրված գումարներին համարժեք նորարարության դրամաշնորհներ)* | - | - | - | - | - | - | *900,000.00* |
| *(դ) Ծրագրի Բ.1(բ) մասի շրջանակներում (Վենչուրային հիմնադրամ)* | - | - | - | - | - | - | *3,000,000.00* |
| 3. Ծրագրի Բ.3(ա)(i) մասի շրջանակներում խորհրդատուների ծառայություններ և վերապատրաստում | 65,760.06 | 65,760.06 | 93,000.00 | 93,000.00 | (27,239.94) | (27,239.94) | 800,000.00 |
| 4. Նախապատրաստման կանխավճարի փոխհատուցում | - | 70,559.92 | - | 70,559.92 | - | - | 3,470,000.00 |
| 5. Սկզբնական վճար | - | 60,000.00 | - | 60,000.00 | - | - | 60,000.00 |
| **Ընդամենը** | **5,988,590.54** | **8,819,943.94** | **7,794,680.00** | **10,626,033.40** | **(1,806,089.46)** | **(1,806,089.46)** | **28,425,400.00** |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Դրամական միջոցների վերջնական մնացորդ<br>Նպատակային հաշիվ -ՎԶՄԲ վարկ No. 7963-AM<br>Ընթացիկ հաշիվ -ՀՀ Կառավարության համաֆինանսավորում | <br>389,539.61<br>171,967.42 | <br>389,539.61<br>171,967.42 | | | | | |
| Ընդամենը | 561,507.03 | 561,507.03 | | | | | |

# ԸՍՏ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՖՈՆԴԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

*Էլեկտրոնային հասարակության և մրցունակության համար նորարարության ծրագիր*
*ՎԶՄԲ վարկ No. 7963-AM*
*2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա վերաբերյալ*
*ԱՄՆ դոլար*

| Բաղադրիչ | Փաստացի | | Նախատեսված | | Շեղում | | ԾԳՓ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Հաշվետու տարի | Անռղական | Հաշվետու տարի | Անռղական | Հաշվետու տարի | Անռղական | |
| Մաս Ա. Էլեկտրոնային հասարակության ենթակառուցվածքների զարգացում | 3,707,720.82 | 4,004,082.83 | 3,705,000.00 | 4,001,362.01 | 2,720.82 | 2,720.82 | 15,685,200.00 |
| Մաս Բ. Ձեռնարկությունների նորարարության խթանում | 1,967,989.38 | 3,778,357.72 | 3,774,680.00 | 5,585,048.34 | (1,806,690.62) | (1,806,690.62) | 11,132,700.00 |
| Մաս Գ. Ծրագրի կառավարում | 312,880.34 | 1,037,503.39 | 315,000.00 | 1,039,623.05 | (2,119.66) | (2,119.66) | 1,607,500.00 |
| Ընդամենը ծախսեր | 5,988,590.54 | 8,819,943.94 | 7,794,680.00 | 10,626,033.40 | (1,806,089.46) | (1,806,089.46) | 28,425,400.00 |